

Cashback ծրագրի կանոնները



1. Cashback ծրագիրը (այսուհետ Ծրագիր) նախատեսում է American Express Cashback Քարտով Հայաստանում կատարած բոլոր վճարային գործառնությունների 1%-ի (մեկ տոկոս) չափով վճարում Քարտատիրոջ Քարտային հաշվին, որից կգանձվի և ՀՀ պետական բյուջե կվճարվի եկամտահարկ՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով:
2. www.americanexpress.com կայքէջում ներկայացված մի շարք սուպերմարկետներում վճարումներ կատարելու դեպքում Ծրագրի շրջանակներում Քարտատիրոջ Քարտային հաշվին կվճարվի գործառնությունների գումարի 2%-ը (երկու տոկոս), որից կգանձվի և ՀՀ պետական բյուջե կվճարվի եկամտահարկ՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով:
3. Ծրագրին անդամակցումը կատարվում է ավտոմատ կերպով Քարտի ձեռքբերման հետ մեկտեղ և չի ենթադրում որևէ լրացուցիչ անդամավճար կամ այլ տեսակի վճարներ:
4. Կանխիկացման գործառնությունների, քարտից քարտ փոխանցումների, կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների, ինչպես նաև Բանկին տրամադրված պարբերական վճարման հանձնարարականով կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների դեպքում Cashback չի կիրառվում:
5. Ծրագրի շրջանակներում վճարման ենթակա գումարը Քարտային հաշվին վճարվում է Քարտի պատվիրման օրվանից յուրաքանչյուր տասներկու ամիսը մեկ՝ տասներկուերորդ ամսվա վերջին բանկային օրը:
6. Քարտը որպես Լրացուցիչ Քարտ տրամադրելու դեպքում Ծրագրի շրջանակներում վճարման ենթակա գումարը Քարտային հաշվին վճարվում է Քարտի պատվիրման օրվանից յուրաքանչյուր տասներկու ամիսը մեկ՝ տասներկուերորդ ամսվա վերջին բանկային օրը, իսկ վերջին տարվա վճարման ենթակա գումարը, ինչպես նաև Լրացուցիչ Քարտը 1 (մեկ) տարուց պակաս գործողության ժամկետով տրամադրելու դեպքում վճարման ենթակա գումարը Քարտային հաշվին վճարվում է հիմնական քարտի գործողության ժամկետի վերջին ամսվա վերջին բանկային օրը:
7. Ծրագիրը գործում է Քարտի ակտիվացման պահից, մինչև վերջինիս գործողության ժամկետի ավարտը:
8. Քարտատիրոջ կողմից Քարտը Քարտի գործողության ժամկետից շուտ փակման դեպքում Ծրագրի շրջանակներում կուտակված և դեռևս չվճարված գումարները զրոյացվում են և ենթակա չեն վճարման Քարտատիրոջ քարտային հաշվին: